ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2030-Ա « 17 » ապրիլի 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի Հ.471-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 14.04.2025թ. հ.2277-26 եզրակացությունը, ինչպես նաև կառույցն իրականացրած անձ Մերի Հարությունյանի 01.04.2026թ. հ.Դ-32011-26 դիմումը.

1. Երևանի քաղաքապետի 2026 թվականի հունվարի 29-ի «Երևան, Էրեբունի, Դավիթ Բեկի հ.134/1 հասցեում՝ սեփականության իրավունքով Մերի Լյովիկի Հարությունյանին պատկանող և Դավիթ Բեկի հ.134/2, հ.134/3 հասցեներում Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ իրականացված կառույցներն օրինականացնելու մասին» հ.471-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում «1318659 (մեկ միլիոն երեք հարյուր տասնութ հազար վեց հարյուր հիսունինը)» բառերը փոխարինել «2526970 (երկու միլիոն հինգ հարյուր քսանվեց հազար ինը հարյուր յոթանասուն)» բառերով,

2) Որոշման 3-րդ և 4-րդ կետերում «2677.72քմ» բառերը փոխարինել «2616.4քմ» բառերով,

3) Որոշման 3-րդ կետում «288.6քմ» և «2389.12քմ» բառերը փոխարինել համապատասխանաբար՝ «238.01քմ» և «2378.39քմ» բառերով:

2. Սահմանել, որ կառույցն իրականացրած անձը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարի Երևան քաղաքի բյուջեի N900015211247 հաշվին սույն որոշման 1-ին կետի առաջին ենթակետում նշված գումարների տարբերությունը՝ 1208311 (մեկ միլիոն երկու հարյուր ութ հազար երեք հարյուր տասնմեկ) դրամ:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ